



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝
«ՀԱՅԱՀԱՇՎԻԼԻ»



-2016p

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵՐՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

FΦ 99

Ձեռնարկողը՝

<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2

Գործունեությունը՝

**«Հիլիջան» ազգային պարկի 2016-2025թթ
կառավարման պլանի միջոցառումների ծրագրի
շրջակա միջավայրի վրա ազդեցության
ուղղմավարական գնահատման հաշվեդրվություն
*«Տափուշ» մարզ***

«Ծրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՍՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 99

<<24>> 11 2016p.

«Դիլիջան» ազգային պարկի 2016-2025թթ կառավարման պլանի միջոցառումների ծրագրի ռազմավարական գնահատման վերաբերյալ

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝
Իրականացման վայրը՝

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ
Հիմնադրութային փաստաթուղթ
ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի 1
քաղաքային և 9 գյուղական բնակավայրեր

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ, Կովկասի բնության հիմնադրամի ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ մշակվել է սույն կառավարման պլանը՝ ենելով Հայաստանի Հանրապետության (ՀՀ) բնապահպանական ռազմավարության քաղաքականությունից: Ազգային պարկի կառավարման մարմինը «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է (ԴԱՊ ՊՈԱԿ), որի գործունեությունը կարգավորվում է կանոնադրությամբ: Սույն կառավարման պլանի գերակա նպատակն է՝ ազգային պարկի տարածքի գոտիավորումն առավելագույնս համապատասխանեցնել Բնության պահպանության միջազգային միության կողմից /ԲՊՍՍ/ 2-րդ կատեգորիայի համար սահմանված չափորոշիչներին, ինչը հաջողությամբ կպահպանվի և կիրականացվի կազմակերպության և բուժերային գոտու համախնների համատեղ կառավարման միջոցով:

Կառավարման պլանն ընդունվում է 2016-2025թ.թ ընկած ժամանակաշրջանում, 2020թ կիրականացվի միջանկյալ զնահատում և կկազմվի 2021-2025 թվականների գործողությունների ծրագիր (գործունեության պլան):

«Դիլիջան» ազգային պարկը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելքում: «Դիլիջան» ազգային պարկը՝ ՊՈԱԿ-ն ունի 33765 հա տարածք, 8167 հա բուժերային գոտի և հիմնականում զբաղեցնում է ՀՀ Տավուշի մարզը, ինչպես նաև փոքր հատվածներով Լոռու և Գեղարքունիքի մարզերը: Այն տարածվում է մի քանի լեռնաշղթաների լանջերին՝ 1070մ - 2900մ բարձրությունների վրա: Ազգային պարկու առանձնանում է գեղեցիկ և բազմապիսի լանդշաֆտներով, բուժիչ հանքային ջրերի աղբյուրներով, գրուաշրջիկների համար խիստ հետաքրքրություն ներկայացնող բնության հուշարձաններով, պատմամշակութային արժեքներով, ինչպես նաև և տեսարժան վայրերով:

Ազգային պարկը տարածված է Դիլիջան քաղաքի և 9 գյուղական համայնքների վարչական սահմաններում: Դիլիջան քաղաքը և հինգ գյուղական բնակավայրեր (Թեղուտ, Հաղարձին, Գոշ, Խաչարձան և Աղավնավանք) գործնականում գտնվում են ԴԱՊ-ի սահմաններում: Չորս բնակավայրեր տեղակայված են պահպանվող տարածքի շրջակայքում՝ Ֆիոլետովոն՝ արևմուտքից, Հովքը՝ հյուսիս-արևելքից, Մեմյոնովկան և Ծովազյուղը՝ հարավից: ՀՀ Տակուշի մարզի գրոսաշրջային հիմնական կենտրոնը շուրջ 20.000 բնակչություն ունեցող Դիլիջան քաղաքն է, որը գտնվում է ծ.մ. 1500 մ բարձրության վրա և ունի ավելի քան 100 տարվա «գրոսաշրջության պատմություն»:



Ազգային պարկի և հարակից համայնքների առանձնահատուկ բնական արժեքներն են՝ հարուստ կենսաբազմազանությունը, բնական անտառները, բնական ջրատարածքները (լճեր, լեռնային գետեր, ջրվեժներ), լանդշաֆտային բազմազանությունը (ֆիզիկական միջավայր), հանքային ջրի աղբյուրները, տեսարժան վայրերը (պատմամշակութային արժեքները) համեմատաբար տաք և խոնավ կլիման առանձնահատուկ միկրոկլիմայով, բերրի հողերը և բնական գյուղատնտեսությունը (ազգությունակարգեր):

Գլոբալ համատեքստում «Դիլիջան» ազգային պարկը գտնվում է «Կովկասյան կիզակետում», կենսաբազմազանության առումով ճանաչվել է աշխարհի կարևորագույն վայրերից մեկը: Ազգային պարկն ունի լավ հնարավորություններ էկոտուրիզմի և բնապահպանական կրթության զարգացման, ինչպես նաև ժամանցի (ոեկրեացիայի) կազմակերպման համար: Այն ունի դեռևս չօգտագործված, սակայն զարգացման մեծ տնտեսական ներուժ, որի կիրառումը կարող է նպաստել գյուղական համայնքների տնտեսական աճի խթանմանը և այն դարձնել որպես նշանակալի զբոսաշրջային վայր:

Կառավարման պլանի դրույթներով սահմանված ազգային պարկի գործառությներն առաջիկայում պետք է ուղղորդվեն պարկի եզակի անտառների, լանդշաֆտների, կենսաբազմազանության, ինչպես նաև բնական և մշակութային հուշարձանների պահպանության արդյունավետության բարձրացմանը:

Ազգային պարկին հարակից բուֆերային գոտում 10 բնակավայրերի տեղաբաշխվածությունը տարբեր մարզերում առաջացնում է որոշակի խնդիրներ՝ տեղական կառավարման մարմինների և ազգային պարկի միջև փոխհարաբերություններում: Ազգային պարկի կառավարման պլանում հաշվի է առնվել նաև նշված հանգամանքը՝ թե հնարավորությունների ընձեռնման, և թե խոչընդոտների հարուցման տեսանկյունից:

ԴԱՊ Էկոհամակարգերի և կենսաբազմազանության հիմնական սպառնալիքներն են.

- ենթակառուցվածքների ոչ համաչափ զարգացումը,
- ապօրինի ծառահատումները,
- ընտանի կենդանիների արածեցումը,
- չկարգավորված զբոսաշրջությունը և ոեկրեացիան,
- աղտոտումը,
- որսագողությունը և անօրինական ձկնորսությունը,
- բույսերի չհամակարգված հավաքը,
- սողանքները (այդ թվում՝ քարաթափումները),
- օտարածին տեսակները և հիվանդությունները,
- հրդեհները,
- կլիմայի փոփոխությունը,
- կառուցապատման նպատակով տրամադրվող հողերի քաղաքաշինական գործունեության կարգավորման խնդիրները /պարկի կառուցապատման ամբողջական հայեցակարգի և զիսավոր հատակագծի մշակման անհրաժեշտություն/:

Հնարավոր սպառնալիքները կանխարգելելու, Էկոհամակարգի ամբողջականությանը և տեսակների բազմազանությանը, սպառնացող ապօրինի և այլ գործողությունները նվազագույնի հասցնելու նպատակով կառավարման պլանում մշակվել են՝ կենդանիների արածեցումը կանոնակարգելու, զբոսաշրջությունը և ոեկրեացիոն գործունեությունը կարգավորելու, ապօրինի ծառահատումները և սողանքները կանխելու և հակարդեհային միջոցառումներ:



Համաձայն պլանում առաջարկվող դրույթների ազգային պարկի գլխավոր նպատակն է՝ «պահպանել բնական կենսաբազմազանությունն իր հիմքում ընկած էկոլոգիական կառուցվածքի և նպաստող բնապահպանական գործընթացների հետ միասին, խթանել կրթությունն ու հանգիստը» և «կառավարման հիմնական նպատակը տարածել պահպանվող տարածքի առնվազն երեք քառորդի վրա»: Արդյունքում ազգային պարկի ընդհանուր տարածքի 75%-ը պետք է կառավարվի ԲՊՄՄ 2-րդ կատեգորիայի հիմնական դրույթներին համապատասխան:

Ազգային պարկի ներկայիս արգելոցային գոտին միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է առավել հոծ անտառային հատվածներ ընդգրկելու միջոցով միավորել մասնատված տարածքները՝ ստեղծելով «կրկնակի բուժերավորմամբ» չընդհատվող միասնական կենսամիջավայր, ինչը նվազագույնի կհասցնի այդտեղ բնակվող կենդանատեսակներին, հատկապես խոշոր կաթնասուններին (գորշ արջ, լուսան, գայլ, այծյամ, վարազ և այլն) սպառնացող գործուների ազդեցությունը և հնարավոր կդարձնի պլանի շրջանակներում նախատեսվող ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագրի հաջող իրականացումը:

Արգելոցային գոտու վերագործիավորման գործընթացն իրականացվելու է փուլ առ փուլ, իսկ ներառվելիք տարածքներն ընտրելիս կարևոր է հաշվի առնվեն հետևյալ չափանիշները.

- գտնվելու վայրը. տարածքներ, որոնք ուղղակիորեն սահմանակից են արգելոցային գոտուն;
- կենսաբազմազանությունը. տարածքներ, որոնք գտնվում են արգելոցային գոտուց դուրս, սակայն սահմանվել են որպես կենսաբազմազանության պահպանության առումով կարևոր վայրեր;
- կտրուկ լանջերը. տարածքներ, որտեղ ցանկացած տնտեսական գործունեություն արգելված է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով և այլ կանոնակարգերով (օրինակ՝ անտառապատ տարածքներ, որտեղ գերակշռում են ավելի քան 30° թերությամբ լանջերը);
- կտրուկ լանջեր ոչ անտառածածկ տարածքներում. ոչ անտառածածկ լանջեր, որոնք շատ ավելի զգայուն են մարդկային գործունեության ազդեցության, այդ թվում՝ հողի մշակության, ընտանի կենդանիների արածեցման նկատմամբ և այլն:

Համաձայն մշակված պլանի «Դիլիջան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտու ներկայիս տարածքի զգալի հատվածը պետք է աստիճանաբար փոխանցվի այլ գոտիների և ձևավորվի նոր ռեկրեացիոն (այցելուների) գոտի, որը կունենա պատշաճ կերպով պաշտպանված և ազգային պարկի հիմնական նպատակների հետ համատեղելի սահմանազատում:

Համաձայն ԲՊՄՄ 2-րդ կատեգորիայի դրույթների պահանջների՝ «տնտեսական ուղղվածություն» ունեցող գոտու ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի ազգային պարկի ընդհանուր մակերեսի 25-30%-ը, ինչից հետևում է, որ ազգային պարկի տնտեսական գոտու տարածքը պետք է զգալիորեն կրճատվի: Տնտեսական գոտու վերագործիավորման ռազմավարության մշակման համար հաշվի են առնվել երկու գործուներ. առաջին՝ որպեսզի ամենաբարձր եկամտաբերություն ապահովող տարածքները դուրս չմղվեն տնտեսական գոտուց և երկրորդ տնտեսական գոտու տարածքների կրճատումն իրականացվի աստիճանաբար երեք փուլերով, ինչը հնարավորություն կտա ազգային պարկին ժամանակի ընթացքում ձևավորել եկամտի այլընտրանքային աղբյուրներ (զբոսաշրջություն, դոնորներ և այլն):

«Դիլիջան» ազգային պարկի ներկայիս տարածքում բացակայում է արգելավայրային գոտին, մինչդեռ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում ամրագրված է ազգային պարկերում արգելավայրային գոտի ունենալու

դրույթը: Ազգային պարկում արգելավայրային գոտի ստեղծելու մեկ այլ կարևոր պատճառ է հանդիսանում նաև ազնվացեղ եղերուի վերաբնակեցման ծրագրի իրականացումը, որի համար կարևոր է ապրելավայրերի ընտրությունը (օրինակ՝ վերանուառային և ենթալպյան մարզագետինները, բացատները, անտառագետները և անտառահարակից տարածքները):

«Դիլիջան» ազգային պարկի որոշ հատվածներում մարդու գործունեության արդյունքում փոփոխվել են բնական լանդշաֆտները նպաստելով էկոլոգիական դեգրադացիայի առաջացման: Կառավարման պլանով ազգային պարկում խիստ դեգրադացված անտառային տարածքների վերականգնման նպատակով առաջարկվում է՝ ստեղծել փոքր վերականգնվող տարածք Դիլիջան քաղաքի մոտ և Աղսու գետի աջակողմյան հատվածներում, հիմնականում տնտեսական և մասամբ՝ ուկրեացիոն գոտիներում:

«Դիլիջան» ազգային պարկին հարակից հատվածում նպատակահարմար է բուժերային գոտու ձևավորումը, որը չպետք է լինի մասնատված և որի սահմանները, հնարավորության դեպքում պետք է համընկնեն բնական սահմանների հետ (օրինակ՝ ջրաժամներ, գետերի կիրճեր կամ հուներ և այլն): Բուժերային գոտին ներկայումս անվանվում է նաև պահպանվող գոտի, որը սահմանակից է պահպանվող տարածքին և հանդիսանում է համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող հողատարածքներ: Բուժերային գոտու տարածական վերափոխումը պետք է իրականացվի ազգային պարկի և հողի սեփականատերերի փոխադարձ համաձայնությամբ:

Պահպանվող գոտու տարածք կարող է համարվել սահմանամերձ համայնքներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող հողերը, կամ ազգային պարկը մինչև 5 կմ հեռավորության վրա շրջապատող տարածքը: Հետևաբար, ազգային պարկին հարակից 10 համայնքների արտաքին սահմանները կարող են տեսականորեն դիտարկել որպես պահպանվող գոտու պայմանական սահման, իսկ համայնքների հողերը կկազմեն այդ գոտու տարածքը:

Այսպիսով, կառավարման պլանի հաշվարկային ժամանակահատվածի առաջին փուլում (մինչև 2020թ) նախատեսվում է բարելավել արգելոցային գոտին /ներդնելով և հիմնելով արգելավայրային գոտի, որը կզբաղեցնի ազգային պարկի շուրջ 25%-ը/, ժամանակավորապես ձևավորել փոքր վերականգնվող տարածքներ, բարելավելով ուկրեացիոն գոտին՝ կրծատելով դրա ընդհանուր մակերեսը, համապատասխանաբար նվազեցնելով տնտեսական գոտու տարածքը, ձևավորելով պահպանվող (բուժերային) գոտու սահմանները՝ ընդլայնելով այն 10.753 հեկտարով:

Երկրորդ փուլում, մինչև 2025թ հնարավոր կլինի հասնել ազգային պարկի վերագոտիավորմանը, ինչի արդյունքում արգելոցային գոտու տարածքն ուղղակիորեն սահմանակից չի լինի բուժերային գոտուն կամ պահպանություն չունեցող տարածքներին և կիանդիսանա համապարփակ հատված: Լիովին ձևափոխված կլինի նաև արգելավայրային գոտին, որը հիմնականում կընդգրկի ազնվացեղ եղերուի վերաբնակեցման և պահպանության համար նպաստավոր տարածքները: Այս փուլում կավարտվի վերականգնվող տարածքների վերականգնման գործընթացը, զգալիորեն կընդլայնվի արգելոցային գոտին, կրծատվի տնտեսական գոտին, իսկ ուկրեացիոն գոտու սահմանները կիամապատասխանեցվեն «այցելուների գոտու» պահանջներին համապատասխան: Համաձայն միջազգային փորձի, ուկրեացիոն գոտին վերանվանվում է այցելուների գոտու և դրան համապատասխան կազմվում այցելուների ծրագիր:

«Դիլիջան» ազգային պարկի ներկայիս վիճակի մանրամասն վերլուծությունների արդյունքում առավել նպատակահարմար է գտնվել իրականացնել հետևյալ ծրագրերը՝ վարչական, պահպանության, մոնիթորինգի և գիտական աշխատանքների, ազնվացեղ եղերուի վերաբնակեցման, այցելուների, կրթության և հանրային իրագեկման:



Ներկայիս գիտության բաժինը, որն անվանվելու է մոնիթորինգի և գիտական աշխատանքների բաժին, պետք է կարևորի նաև մոնիթորինգի գործառությները: Այդ բաժնի գործունեությունը պետք է ուղղորդվի նաև ազգային պարկի կենսաբազմազանության մոնիթորինգային բազմաֆունկցիոնալ համակարգի ձևավորմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության էկոհամակարգերի հարմարվողականությանն ուղղված ուսումնասիրությունների իրականացմանը:

«Դիլիջան» ազգային պարկը նախաձեռնել է ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիր, որի նպատակն է Կովկասյան ազնվացեղ եղջերուի պոպուլյացիայի վերականգնումը՝ դրա բազմացման կենտրոնի հիմնադրման և կենդանիների զինաքանակի ավելացման համար նպաստավոր պայմանների ստեղծման միջոցով: Ծրագրի գործողությունները ներառում են ԴԱՊ-ում բազմացման կենտրոնի հիմնումը և աշխատակիցների վերապատրաստումը, ազնվացեղ եղջերուի 4 արու և 11 էզ կենդանիների ձեռքբերումը և բազմացումը, բնության մեջ տարածումը և մոնիթորինգի իրականացումը: Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումն արդեն ֆինանսավորվել է: Ծրագրը փոխկապակցված կլինի մոնիթորինգի և գիտական աշխատանքների ծրագրի հետ, իսկ աշխատակիցները կհամագործակցեն մոնիթորինգի և գիտական աշխատանքների թիմի հետ:

Թեև կլիմայի փոփոխությանը հակագործ միջոցառումների իրականացումը պետք է սկսվի հինգ տարի անց այս կառավարման պլանի վերանայումից հետո, այնուամենայնիվ կարևորվում է մի շարք հետազոտությունների իրականացումը: Կլիմայի փոփոխության մողելավորման առաջնային թիրախ կհանդիսանա ԴԱՊ-ին բնորոշ անտառային էկոհամակարգերը, մասնավորապես լայնատերև կաղնու և հաճարենու անտառները և ստուտները: Արդյունքների հիման վրա կմշակվեն համապատասխան ադապտացիոն մոտեցումներ (մեխանիզմներ) և այդ աշխատանքներում կներգրավվեն ազգային և միջազգային փորձագետներ:

«Դիլիջան» ազգային պարկը դեռևս չունի գրուաշրջության ռազմավարություն և առաջիկ տարիներին դրա մշակումը կխթանի էկոլոգիական գրուաշրջությունը և ռեկրեացիոն գործառույթները:

Ծրագիրը լինելով բազմաբնույթ, վերջինիս իրականացումը ենթադրում է սերտ համագործակցություն գիտական և ուսումնական հաստատությունների, ինստիտուտների համապատասխան մասնագետների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և հասարակական կազմակերպությունների հետ: ԴԱՊ-ը պետք է սերտորեն համագործակցի Բուսաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, և ԲՀՀ-ի հայաստանյան ներկայացուցչության հետ, որոնք կարող են օգնել տվյալների բազայի ստեղծման և տվյալների վերլուծության հարցերում:

Անտառային վերականգնողական միջոցառումներ իրականացնելու համար ազգային պարկը պետք է գործընկերություն հաստատի տարբեր գիտական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների հետ, որոնք գրադաւում են անտառապատման և անտառվերականագնման հարցերով: Դրանք կարող են օգնել ազգային պարկին՝ տրամադրելով մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, ստեղծելով տնկարան և ապահովելով տնկման աշխատանքների տեխնիկական սպասարկումը: Այնուամենայնիվ, ներդրումային ծրագրերը լիարժեք իրականացնելու նպատակով ազգային պարկը պետք է աջակցություն ստանա միջազգային և այլ կազմակերպությունների կողմից:

Կառավարման պլանի իրականացման ընթացքն անհրաժեշտ է պարբերաբ մշտադիտարկել: Ազգային պարկը ՀՀ բնապահպանության նախարարությանը պետք է հաշվետու լինի հնգամյա պլանի իրականացման համար:



Φωστωθηρή η φορδαρένη πιεργάνη φοιλέρπιμ 22 ορέκηνηρπιεργάνη με υακίνωντας λαργόνη 22 Σακούζη μαρόνηταράνη πιμ 2 αμφάν /12.08.2016ρ. και 20.10.2016ρ./ ανεγκαράκη την ήμερηαήν ρένηαράκηταράνη, πρόνης ρένηαράκηταράνη με ήμερηαήν φωστωθηρή η φορδαρένη πιεργάνη με υακίνωντας λαργόνη πιεργάνη:

Եզրահանգում: Ամփոփելով հաշվետվության գնահատման և փորձաքննության արդյունքները պետք է նշել, որ ծրագրի իրականացումը բնապահպանական ոլորտում կունենա կարևոր ռազմավարական նշանակություն: «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանով նախատեսված գործողություններն ուղղված են բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանմանն ու զարգացմանը և հանդիսանում են Հայտանի բնապահպանական քաղաքականության երկարաժամկետ զարգացման կարևոր բաղադրիչ: Ըստ տեսլականի ակնկալվում է, որ մինչև 2030թ.-ը «Դիլիջան» ազգային պարկը կլինի որպես ճանաչված բնության հատուկ պահպանվող տարածք և կհամապատասխանի Բնության պահպանության միջազգային միության կողմից 2-րդ կատեգորիայի համար սահմանված չափորոշիչներին:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրությաին փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախազգային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» ազգային պարկի 2016-2025թթ կառավարման պլանի միջոցառումների ծրագրի ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

A circular blue ink stamp. The outer ring contains the text 'ՀԱՅԱՍՏԱՆԻ' at the top and 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ' at the bottom. The inner circle contains the text 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ' at the top and 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ' at the bottom. In the center, it says 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ' at the top and 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ' at the bottom. The number '2543153' is in the middle.

Մասնակտություն

Հ. Մկրտչյան